ԱՍՏՎԱԾ ԵՒ ԳՈՂԻԱԹԸ

1 ԹԱԳ. 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԾԱՌԱՅՈՂԻ ՍԻՐՏ – SERVANT'S HEART
2. ՀՈՎՎԻ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART
3. ԱՆԿԵՂԾ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

4 Եւ մի միջնամարտիկ (champion) էր դուրս եկել Փղշտացիների բանակից՝ անունը Գողիաթ: 8
Նա եկավ կանգնեց, ձայն տվեց իսրայէլացիների բանակին՝ ասելով. «Ինչո՞ւ էք մեր դէմ
ելել պատերազմելու: Մի՞թէ ես Փղշտացի չեմ, և դուք՝ Սաւուղի ծառանե՞րը: Ձեր միջից
ընտրեցէ՛ք մի մարդ, որ իմ դէմ ելնի: 9 Եթէ նա կարողանա կռվել իմ դէմ և ինձ սպանել,
մենք ձեզ ծառա կը լինենք, իսկ եթէ ես հաղթեմ ու սպանեմ նրան, դո՛ւք մեզ ծառա կը լինէք
ու մեզ կը ծառայէք»: 10 Այլազգին ավելացրեց. «Ահավասիկ ես այսօր Իսրայէլի զօրքը
խայտառակելու եմ: Մի մարդ տվէ՛ք, և ես ու նա երկուսով մենամարտենք»: 11 Եւ երբոր
Սաւուղն ու բոլոր Իսրայէլը լսեցին Փղշտացու այս խօսքերը, զարհուրեցին և շատ
վախեցան:

32 Դավիթն ասաց Սաւուղին. «Գողիաթի պատճառով իմ տիրոջ սիրտը թող չկոտրուվի:
33 Քո ծառան կը գնա ու կը մենամարտի այդ Փղշտացու դէմ»: Սաւուղն ասաց Դավթին.
«Գուցէ չկարողանաս գնալ կռվել Փղշտացու դէմ, որովհետև դու երիտասարդ ես, իսկ նա
մանկութիւնից ի վեր պատերազմող մարդ է եղել»: 34 Դավիթն ասաց Սաւուղին. «Քո
ծառան իր հօր ոչխարներն էր արածեցնում, և երբ առյուծ կամ արջ էր գալիս և հօտից
ոչխար էր տանում, 35 ես նրան հետապնդում էի, զարկում և կորզում ոչխարը նրա
երախից: Իսկ եթէ ինձ վրա էր հարձակվում, բռնում էի նրա կոկորդից, հարուածում ու
սպանում նրան: 36 Քո ծառան առյուծ էլ է սատկեցրել, արջ էլ: Նույն կերպ կը վարվեմ ես
այդ Փղշտացու հետ: Ո՞վ է այդ անթլփատը, որ կենդանի Աստծու զօրքն է նախատել»:
37 Դաւիթն ասաց. «Եթէ Տէր Աստուած ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից, ինձ կը
փրկի նաև այդ անթլփատ այլազգու ձեռքից»: Եւ Սաւուղը Դավիթին ասեց. Գնա, և Տէրը
քեզ հետ լինի: 38 Սաւուղը Դավթի ուսերին գցեց իր թիկնոցը, գլխին դրեց պղնձէ
սաղաւարտը և հագցրեց իր զրահները: 39 Դավիթը նրա սուրը կապեց թիկնոցի վրայից և
սկսեց ման գալ, որովհետև սովոր չէր. Եւ Դավիթը Սաւուղին ասեց. Սորանցով չեմ կարող
ման գալ, որովհետև սովոր չեմ. Եւ Դավիթը հանեց նորանք իր վրայից: 40 Նա ձեռքն
առավ ցուպը և հեղեղատից հինգ ողորկ քարեր ընտրելով՝ դրեց իր հովուական տոպրակի
մէջ, և պարսը ձեռքին՝ մօտեցավ Փղշտացուն: 41 Փղշտացին նույնպէս եկավ ու մօտեցավ
Դավթին և նրա վահանակիրն իր առջևից էր գնում: Երբ Փղշտացին նայեց ու տեսավ
Դավթին, արհամարհեց նրան, որովհետև նա կարմիր գույնով և գեղեցկադէմ պատանի
էր: 43 Եւ Փղշտացին ասեց Դավիթին. Մի՞թէ ես շուն եմ՝ որ ինձ վրա ցուպով ես գալիս, և

Փղշտացին նզովեց Դավիթին իր աստուածներով: (Սաղ. 23:4 - Թէ և գնամ մահի շուքի ձորումը՝ չար բանից չեմ վախենալ. որովհետև դու ինձ հետ ես. քո գաւազանն ու քո ցուպը՝ նորանք մխիթարում են ինձ:)

44 Եւ Փղշտացին ասեց Դավիթին. Եկ ինձ մօտ, և ես քո մարմինը երկնքի թռչուններին և
դաշտի գազաններին տամ: 45 Դավիթն ասաց Փղշտացուն. «Դու ինձ վրա ես հարձակվում
սրով, գեղարդով և վահանով, իսկ ես քեզ վրա եմ հարձակվում **Իսրայէլի զօրքի
զօրութիւնների Տիրոջ անունով,** Իսրայէլի, որին դու այսօր նախատեցիր: 46 Տէրը քեզ
այսօր իմ ձեռքը կը մատնի, ես կը սպանեմ քեզ, քո գլուխը կը կտրեմ, եւ Փղշտացիների
բանակի դիակները այսօր երկնքի թռչուններին և երկրի գազաններին կտամ. որպէս զի
բոլոր երկիրը իմանա որ Իսրայէլը Աստուած ունի. 47 Այս ամբողջ բազմութիւնը կ՚իմանա,
թէ Տէրը սրով ու գեղարդով չէ որ փրկում է, քանզի ՍԱ ՏԻՐՈՋ ՊԱՏԵՐԱԶՄՆ Է, և Տէրը ձեզ
մեր ձեռքը պիտի մատնի»: 48 Եւ երբոր Փղշտացին վեր կացավ և եկավ դիմավորելով
Դավիթին մօտեցավ, Դավիթն էլ շուտով վազեց պատերազմի ասպարէզ Փղշտացիին
դիմավորելու: 49 Դավիթը ձեռքը մտցրեց տոպրակի մէջ, այնտեղից մի քար առավ ու այն
պարսատիկով նետելով՝ հարվածեց Փղշտացու ճակատին: Քարը սաղավարտը ծակելով
մտավ ճակատի մէջ, և Գողիաթը երեսնիվայր գետին ընկավ: 50 Այսպիսով Դավիթը
պարսատիկով ու քարով հաղթեց Փղշտացուն, հարվածեց ու սպանեց նրան: 51 Դավթի
ձեռքին, սակայն, սուր չկար, ուստի Դավիթը վազեց, կանգնեց Փղշտացու վրա, բռնեց նրա
սուրը, բռնելով քաշեց հանեց պատեանից, **սպանեց** ու գլխատեց նրան:

UPWARD: God

Դեպի վեր: Աստված

We agree to be devoted to and developing a supernatural relationship with God by - Knowing God through prayer, worship and studying His Word.

Մենք համաձայն ենք լինել նվիրված և զարգացնել գերբնական հարաբերություն Աստծո հետ – աղոթքի, երկրպագության եւ Իր խոսքի միջոցով:

Ինչպես կարող ենք այս պատմությունը կիռառել մեր կյանքերում:

I. Այն ինչ որ Դուք ինքներդ հավատում եք Ձեր մասին… ազդում է Աստծո հետ Ձեր ունեցած փոխհարաբերությունների վրա:

What you believe about yourself affects your relationship with God.

12 Հուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքից եփրաթացի մի մարդ կար, նրա անունը Հեսսէ էր: Հեսսէն ութ որդի ունէր: Սավուղի օրօք նա ծերութեան հասած մարդ էր:

Ո՞վ է այդ անթլփատը, որ կենդանի Աստծու զօրքն է նախատել»: 37 Դաւիթն ասաց. «Եթէ Տէր Աստուած ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից, ինձ կը փրկի նաև այդ անթլփատ այլազգու ձեռքից»:

➡ **Ով եմ ես Քրիստոսում (Անդրեի օրինակը)**

Ես ընդունված եմ... Ես ապահով եմ... Ես կարևոր եմ...

«Եթե դուք ցանկանում եք հաջողակ և հաղթական քրիստոնեական կյանք ունենալ, էապես կարևոր է, որ հասկանաք ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ»:

«Որքան ավելի վերահաստատեք ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ, այնքան ձեր վարքն ավելի կսկսի արտացոլել ձեր ճշմարիտ ինքնությունը»:

Դոկտոր Նիլ Անդերսոնի «Հաղթել խավարը» գրքից

II. Այն ինչ որ Դուք ինքներդ հավատում եք Ձեր մասին... ազդում է թե Դուք ինչպես եք առնչվում այլ մարդկանց հետ:

What you believe about yourself affects how you relate to other people.

13 Հեսսէի երեք ավագ որդիները Սաւուղի հետ պատերազմի էին գնացել:

26 Դավիթն իրեն շրջապատող մարդկանց ասաց. «Ի՞նչ կ՚անեն այն մարդուն, որ Փղշտացուն կը սպանի և Իսրայէլի նախատինքը կը վերացնի:

28 Երբ նրա ավագ եղբայր Եղիաբը լսեց նրա զրույցը այդ մարդկանց հետ, Դավիթի վրա Եղիաբի բարկությունը բորբոքվեց և ասեց. «Դու ինչո՞ւ ես եկել այստեղ, անապատում ո՞ւմ ես հանձնել այն մի քանի ոչխարները: Ես գիտեմ քո մեծամտությունը և սրտի չարությունը, դու պատերազմը դիտելու համար ես եկել»: 29 Դավիթն ասաց. «Հիմա ես ի՞նչ եմ արել. այսպես չէ »: 30 Եւ նորա մօտից մէկ ուրիշ մարդու դարձաւ...

20 Եւ Դաւիթն առաւօտը կանուխ վեր կացաւ ոչխարները պահապանին յանձնեց, և վեր առաւ գնաց, ինչպէս որ Յեսսէն նորան հրամայել էր:

➡ **Եղիաբի մրցակիցը (հակառակորդը) Դավիթն էր այլ ոչ թե Գողիաթը: Ինչու**

Մենք երբ հասկանում ենք մեր ինքնությունը Քրիստոսի մեջ, մենք նաև կարողանում ենք զանազանել թե ով է մեր իրական թշնամին:

Եփ. 6:12-13 - *12 Որովհետև մեր պատերազմը արյունի և մարմնի հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնավորների մէջ են: 13 Սորա համար Աստուծո սպառազինությունն առէք, որ կարող լինեք դիմակայել չարության օրում, և ամենը կատարելով հաստատ կանգնել.*

III. Այն ինչ որ դուք ինքներդ հավատում եք Ձեր մասին… ազդում է Ձեր վարքագծի վրա և նաև, թե ինչի եք դուք հասնելու:

What you believe about yourself affects how you behave and what you achieve.

Առողջ հավատքի միակ նշանը դա մարդու վարքագիծն է, իսկ վարքագծի միակ նշանը ձեր հավատքի գործերն են:

*Հակ. **2:14-20 -** 14 Ի՞նչ է օգուտ, եղբայրներ, եթէ մէկն ասի թէ հավատք ունի և գործ չ՚ունենա. Մի՞թէ հավատքը կարող է ապրեցնել նորան. 19 Դու հաւատում ես թէ մէկ է Աստուած, լաւ ես անում. դևերն էլ են հաւատում և սարսափում են: 20 …հաւատքն առանց գործերի մեռած է:*

➡ Ո՞րոնք էին Դավիթի հավատքի գործերը. (David's Resume)

*Ես տեսել եմ Բեթղեհէմացի Հեսսէի տղային, որ քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, ճարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ **Տէրը** նորա հետ է:*

45 Դավիթն ասաց Փղշտացուն. «Դու ինձ վրա ես հարձակվում սրով, գեղարդով և վահանով, իսկ ես քեզ վրա եմ հարձակվում Իսրայէլի զօրքի զօրութիւնների Տիրոջ անունով, Իսրայէլի, որին դու այսօր նախատեցիր: 46 Տէրը քեզ այսօր իմ ձեռքը կը մատնի, ես կը սպանեմ քեզ, քո գլուխը կը կտրեմ, Եւ Փղշտացիների բանակի դիակները այսօր երկնքի թռչուններին և երկրի գազաններին կտամ. որպէս զի բոլոր երկիրը իմանա որ Իսրայէլը Աստուած ունի. 47 Այս ամբողջ բազմությունը կ՚իմանա, թէ Տէրը սրով ու գեղարդով չէ որ փրկում է, քանզի սա Տիրոջ պատերազմն է, և Տէրը ձեզ մեր ձեռքը պիտի մատնի»:

Ամփոփում

Այս արտահայտությունները ցույց են տալիս ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ: Բարձրաձայն կարդացեք այս ցուցակը, մինչև որ այն դառնա ձեր մասը: Ժամանակ առ ժամանակ աղոթեք ըստ այս ցուցակի, և խնդրեք Աստծուն դաջել այս ճշմարտությունները ձեր սրտում: